ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 7-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. Իմ կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1264-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը գտնվում է լրամշակման փուլում՝ հաշվի առնելով գերատեսչություններից ստացված դիտարկումներն ու առաջարկները:
2. Վերլուծություն եմ իրականացրել անձնական օգնականի ծառայության շրջանակում կնքված պայմանագրերի վերաբերյալ: 2024 թվականի ընթացքում անձնական օգնականի ծառայությունից օգտվել է շուրջ 100 շահառու, իսկ 2025 թվականի պետական բյուջեի վերաբաշխման արդյունքում ևս 115 շահառուի հնարավորություն է ընձեռնվել ստանալ այդ ծառայությունը: 2026 թվականին անձնական օգնականի ծառայություն ստանալու հնարավորություն կունենա ընդհանուր առմամբ 300 շահառու՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: Շահառուների թվի ավելացումը կրում է շարունակական բնույթ:
3. Նախաձեռնվում են նոր օրենսդրական փոփոխություններ, այդ թվում ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման, որի շրջանակում կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ՝ առկա և հեռակա տարբերակներով:
4. Ապահինստիտուցիոնալացման համատեքստում Հայաստանում կառուցվում և վերանորոգվում են համայնքային փոքր խմբային տներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց մշտական բնակության նպատակով: Մասնավորապես, անմիջական մասնակցություն ունեմ ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ, Ակնաշեն, Մրգաստան

համայնքներում ստեղծվող փոքր տների վերակառուցման և գործունեության կազմակերպման աշխատանքներին: Ակնաշենի համայնքային փոքր խմբային տունն արդեն իսկ պատրաստ է շահագործման: Մրգաստանի նախագիծը գտնվում է լրամշակումների փուլում:

5. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ և ուղղորդումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

05.02.2026թ.